«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անուշ Փարսադանյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի հ.45 հիմն. դպրոց

Երևան 2023

ԹԵՄԱՆ՝ Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

ՀԱՐՑԵՐ՝ 1. Ի՞նչ է հայրենասիրությունն ու արժեհամակարգը:

2. «Սասունցի Դավիթ» էպոսի գլխավոր կերպարներն ի՞նչ դեր են կատարում սովորողների հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ---------- 4

Հայրենասիրություն ու արժեհամակարգ ----------6

Բովանդակություն ----------8

Էպոսում գլխավոր հերոսների դերը երեխայի հայրենասիրության և արժեհամակարգի ձևավորման գործում ----------11

Խմբային աշխատանք ----------18

Եզրակացություն ----------19

Գրականության ցանկ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ընտանեկան, կրթական, հասարակական , սոցիալական և այլն: Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում մեծ դեր ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ:Ժողովուրդը ոչ միայն նյութական արժեքներ ստեղծող ուժն է, այլև նրա հոգևոր արժեքների միակ և անսպառ աղբյուրն է: Յուրաքանչյուր ժողովուրդ հենց իր բանավոր ստեղծագործություններով է կերտում իր անմահության հուշարձանները: Մարդկային ամեն մի նոր սերունդ մեծ չափով օգտվում է նախորդ սերունդների կողմից ստեղծված հոգևոր և նյութական արժեքներից:

Հայ ժողովրդական հերոսավեպը՝«Սասունցի Դավիթը», մեր ժողովրդի արհավիրքներով լի կյանքի պատմությունն է, նրա կենսահայեցողության և փիլիսոփայության հավերժ կենդանի գիրքը, որի ուսուցումն ու յուրացումը եղել և մնում է «Հայ գրականություն» դասավանդող ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը:Էպոսի մեջ հստակ երևում է տվյալ ժողովրդի հոգու պատկերը: «Սասունցի Դավիթ» էպոսում պատկերվել են հայ ժողովրդի պատմության ամենահերոսական էջերը, ժողովրդի մաքառումները, հանուն հայրենիքի և ազատության մղվող պայքարը, ժողովրդի վսեմ գաղափարները: Ամենայն հայոց բանաստեղծը՝ Հովհաննես Թումանյանը գրում է.«Էպոսը մեր ազգային հոգու մեծագույն հարստությունն է,որի մեջ արտահայտվում են ժողովրդի նվիրական խոհերն ու երազանքները, մեր դարավոր պայքարը հանուն ազատության, մեր ազգային կենցաղը, մեր բնավորությունը, ոճն ու ոգին»: Հայ ժողովուրդը բերնեբերան այն պատմել է դարերով, հարստացրել նոր դրվագներով ու գաղափարներով, հարմարեցրել իր ժամանակների ոգուն, և այն այժմ դարձել է ժողովրդական հանճարի անգերազանցելի մարմնացում: Որպես ժողովրդի բարոյական վսեմ հատկանիշներ՝ հերոսավեպում իշխող անկեղծությունը, պարզությունը, հայրենիքի, աշխատանքի և աշխատավոր մարդու հանդեպ ունեցած սերը դարերի միջով եկել հասել են մեզ: Այս հատկանիշները նա մարմնավորել է իր իդեալ-հերոսի մեջ:

«Սասունցի Դավիթ» էպոսը դարձել է հայ ժողովրդի կյանքի, հավատի ու բարքերի, հոգեբանության ու աշխարհայեցողության մի ընդարձակ հանրագիտարան:

Հայկական էպոսում կերպարների հիմքում ընկած են բարոյական, քաղաքական, իրավական պատկերացումները բարու ու չարի, պարտքի և պատասխանատվության, յուրայինի և օտարի, ազգի ու հայրենիքի, մարդկայինի, պատմության և իշխանության մասին: Ժողովուրդն իրականությունը դիտում է համամարդկային բարոյականության դիրքերից և բարոյական հասկացություններով: Մարդկային վարքը նա գնահատում է պարտքի, պատասխանատվության, ազնվության, խղճի, արդարության, մաքրության, հայրենասիրության միջոցով:

«Սասունցի Դավիթ» էպոսում իրացվող գաղափարներն արդիական են, քանի որ ժողովուրդը միշտ ձգտում է արդարության, ազատության, ազգային արժեքների պահպանման, դժգոհում և քննադատում անարդարությունը, կեղծ և վախկոտ իշխանավորներին, ցանկանում է ունենալ արդար ու անկախ իշխանություն: Երկրի և պետության ղեկավարը պետք է լինի հայրենասեր, գնահատի ազգային արժեքները, ապրի իր ժողովրդի ցավով, օգնի ու պաշտպանի նրան, լինի ազնիվ ու արդար, ծաղկեցնի երկիրը: Այսպես է տեսել ժողովուրդն իր ղեկավարին, և այսպիսին են եղել էպոսի գլխավոր հերոսները, ովքեր առաջնահերթ մտածել են ժողովրդի մասին. կառուցել են տներ ու վանքեր, պաշտպանել օտարից, ծաղկեցրել երկիրը...

Հայ ժողովրդական էպոսը մարդկության ստեղծած ամենահանճարեղ գեղարվեստական գործերից է, որի մեջ ստեղծված գաղափարները կենսունակ են նաև այսօր:

Ժամանակակից մանկավարժության նպատակն է դաստիարակել, կերտել քննադատական միտք ունեցող, ինքնուրույն, ինքնակրթությամբ մշտական զարգացումը կարևորող, հայրենիքի հանդեպ պատասխանատվության մեծ զգացում ունեցող, ազգային արժեքները գնահատող և պահպանող անհատ, ով կկարողանա համարձակ ու անվարան առաջ շարժվել, դիմակայել ժամանակի այն բոլոր մարտահրավերներին, որ դրվել և դրվելու են իր հայրենիքի և իր ժողովրդի առջև:Մատաղ սերունդը, բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, պետք է ունենա տեսլական՝ ինչպիսին դառնալ, դեպի ուր շարժվել:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Հայրենիքն այն տարածքն է, որտեղ որևէ ժողովուրդ, ազգ կամ էթնիկ խումբ ապրում է՝ կերտելով իր պատմությունը, ազգային ինքնագիտակցությունը, սերունդներին է փոխանցում իր ազգային արժեքները: Հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ անսահման և անձնուրաց սերն է, այդ տարածքը հայրենիք անվանելու իրավունքի գնահատումը, հայրենիքի համար ամեն ինչ անելու պատրաստակամությունը:

Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքին կամ պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության:

Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի բազմակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ անընդհատ իրագործվող սիրո և հարգանքի դրսևորումն է: Այն կարող է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ և ձգտումը՝ տեսնել հայրենիքը կանգուն և բարգավաճ: Հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, անցյալը, ներկան, ապագան, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքը:

Արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Մանկավարժության տեսակետից արժեքներից որևէ մեկին չի կարելի գերապատվություն տալ:

Արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հայոց լեզվի և գրականության դերը, որը սովորողների մեջ ձևավորում է հայրենասիրություն, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Նրանք, իրենց տարիքային, սեռական, անհատական

առանձնահատկություններին համապատասխան, իրենց նույնացնում են այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը ,կյանքի ոճը և այլն: Սովորողների արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ թե ընտանիքում, այլ նաև դպրոցում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով:Ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով /դասղեկական ժամ, էքսկուրսիա, անհատական և խմբային աշխատանքներ, արտասադարանական և դպրոցական միջոցառումներ.../ ուսուցիչն ավելի արդյունավետ է դարձնում սովորողների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը:

Դպրոցն ավարտող յուրաքանչյուր սովորող պետք է լինի հայրենասեր, պատրաստ ծառայելու հայրենիքին, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը, ունենա ազգային ինքնագիտակցություն և կամք՝ հասնելու այդ ձգտմանը:

Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական մեծագույն արժեքը հայրենասիրությունն է: Հայրենասիրություն դաստիարակելու համար էպոսը հրաշալի գործ է, որի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է ստացել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

«Սասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» հայ ժողովրդական հերոսավեպը ժողովրդի մեջ գոյություն է ունեցել և բերանացի փոխանցվել հին ժամանակներից: Այն Միավորված ազգերի կազմակերպության գիտության և մշակույթի հանձնաժողովի /ՅՈՒՆԵՍԿՕ/ կողմից ճանաչվել է համամարդկային մշակութային արժեք:

Դեռևս 16-րդ դարում էպոսի մասին տեղեկություններ են իմացել պորտուգալացի ճանապարհորդներ Ա. Տենրերյոն և Մ. Աֆոնսոն, ովքեր միմյանցից անկախ ճամփորդել են Արևելքում, եղել Սասունում և լսել պատմություններ Դավթի և Խանդութի մասին: Սակայն էպոսը առաջին անգամ 1873 թ. գրի է առել հայ մեծագույն բանահավաք Գարեգին Սրվանձտյանը և 1874թ.-ին հրատարակել «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» վերնագրով: Երկրորդ պատումը գրի է առել և «Դավիթ և Մհեր» վերնագրով 1889թ.-ին Շուշիում տպագրել Մ. Աբեղյանը:

1939թ.-ին «Սասնա ծռեր» դյուցազներգության հազարամյակի կապակցությամբ մինչ այդ գրի առնված վաթսուն պատումների հիման վրա Մ.Աբեղյանի, Գ.Աբովի և Ա. Ղանալանյանի ջանքերով ստեղծվում է համահավաք բնագիրը «Սասունցի Դավիթ» վերնագրով: Խմբագիրն էր Հովսեփ Օրբելին: Էպոսում արտացոլվել է հայ ժողովրդի դարավոր պայքարը արաբական խալիֆայության դեմ 8-10-րդ դարերում:

Էպոսը կոչվել է «Սասնա ծռեր»: «Ծուռ» նշանակում է դիվահար, խելահեղ, քաջ, խենթավուն, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն հատվածում: Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», «Մեծերի տուն», «Ավագների տուն», «Հսկաների տուն»:

Էպոսը բաղկացած է չորս ճյուղից՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ», «Փոքր Մհեր»: Ճյուղերից յուրաքանչյուրը մեկ սերնդի պատմությունն է՝ ծննդից մինչև մահ: Առաջին ճյուղը՝ «Սանասար և Բաղդասար», ներկայացնում է սասունցիների տոհմի հիմնադրման պատմությունը: Բաղդադի խալիֆը բռնությամբ ամուսնանում է Հայաստանի Գագիկ թագավորի դստեր՝ Ծովինարի հետ, ով Բաղդադ մեկնելուց առաջ շրջում է հայրենի լեռներում և ժայռից բխած աղբյուրից մի բուռ լիքը և մի բուռ կիսատ ջուր է խմում և հղիանում: Բաղդադում ծնվում են երկու եղբայրները՝ Սանասարն ու Բաղդասարը:Մեծանալով

օտար երկրում՝ եղբայրները սպանում են խալիֆին և իրենց մոր հետ հեռանում են Բաղդադից դեպի Հայաստան: Հայաստանում մի «բարակ, բայց զորեղ» առվի ակունքին հիմնում են անառիկ մի բերդ և անունը դնում Սասուն, սկիզբ դնում Սասնա ծռերի դյուցազնական տոհմին: Ծովի հատակից ձեռք են բերում Քուռկիկ Ջալալին, զենքն ու զրահը, որոնք փոխանցվում են սերնդեսերունդ: Սանասարն ամուսնանում է Դեղձուն Ծամի հետ և ունենում է երեք զավակ՝ Վերգո, Հովան, Մհեր, իսկ Բաղդասարը մնում է անժառանգ:

Երկրորդ ճյուղը՝«Մեծ Մհեր» , ներկայացնում է Սանասարի որդուն՝ Մհերին, ով տասնհինգ տարեկանում երկու կես է անում դեպի Սասուն տանող հացի ճանապարհը փակող առյուծին և կոչվում Առյուծաձև Մհեր, սասունցիներին ազատում սովից, կռվում Սպիտակ Դևի դեմ, փրկում գեղեցկուհի Արմաղանին և ամուսնանում հետը: Մենամարտում է Մսրա Մելիքի հետ, իսկ Մելիքի մահից հետո Մելիքի կնոջ՝ Իսմիլ Խաթունի խնդրանքով գնում է Մսրը, որտեղ Իսմիլ Խաթունը դիմում է խորամանկության, հարբեցնում նրան, և ծնվում է փոքր Մսրա Մելիքը: Մհերը վերադառնում է Սասուն, ունենում Դավթին: Դավթի ծնվելու օրն էլ մահանում են Մհերն ու Արմաղանը:

Երրորդ ճյուղը՝ «Սասունցի Դավիթ», էպոսի ամենաամբողջական ճյուղն է: Ծնողներից որբացած Դավիթը մեծանում է Մըսրում, սնվում Սասունից բերված յուղ ու մեղրով: Մեծանում է օրեցօր, ժամ առ ժամ, Կաթնաղբյուրից ստանում անպարտելի ուժ: Վերադառնալով Սասուն՝ զբաղվում է հովվությամբ, նախրապանությամբ, որսորդությամբ, վերակառուցում է Մարութա վանքը,կռվում Մսրա Մելիքի հետ, նրան երկու կես անում: Նշանվում է Չմշկիկ Սուլթանի հետ, բայց ամուսնանում Խանդութ Խաթունի հետ: Մեկնում է Գյուրջստան: Այդ ընթացքում ծնվում է Փոքր Մհերը, ով գնում է ՝ գտնելու հորը: Նրանք հանդիպում են և քանի որ միմյանց չեն ճանաչում, մենամարտում են: Այդ ժամանակ Դավիթն անիծում է Մհերին.«Անմահ ըլես, անժառանգ»: Դավիթը մահանում է Չմշկիկ Սուլթանի աղջկա /ով նաև իր աղջիկն էր/ թունավոր նետից: Դավթի մահը լսելով՝ ինքնասպան է լինում Խանդութը՝ իրեն բերդից ցած նետելով:

Չորրորդ ճյուղը ներկայացնում է Փոքր Մերին, ով Դավթի մահից հետո ղեկավարում է Սասունը: Նա թափառում է երկրից երկիր, կռվում Կոզբադնի թոռների դեմ, լուծում հոր վրեժը՝ սպանելով Չմշկիկ Սուլթանին: Ամուսնանում է Գոհարի հետ: Կատարվում է հոր անեծքը. Միերը մնում է անժառանգ և անմահ: Հողը չի դիմանում նրա ծանրությանը, և նա փակվում է Ագռավաքարում, որտեղից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ

Աշխարհք ավերվի, մեկ էլ շինվի,

Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի,

Ու գարին էղավ քանց ընկույզ մի...

«Սասունցի Դավիթ» էպոսն իր մեջ պահպանել է մեր ժողովրդի իմաստաբանությունը՝ սկսած խոր հնադարից մինչև մեր օրերի ազատագրական մաքառումները...

ԷՊՈՍՈՒՄ ԳԼԽԱՎՈՐ ՀԵՐՈՍՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Սասունցի Դավիթ» հերոսավեպի ամենաբնորոշ գիծը նրա հերոսական անպարտելի ոգին է, որ մի կողմից պայմանավորված է նրա նախահիմքում ընկած հին առասպելական դյուցազունների հերոսական սխրանքներով, մյուս կողմից՝ արաբական բռնապետության դեմ մղած դարավոր հերոսական մաքառումներով, որոնցով բնորոշվում է ութից տասներորդ դարերի հայոց պատմությունը: Էպոսում չորս սերնդի ներկայացուցիչները, միմյանց լրացնելով, միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են իրենց կերպարները ստեղծող ժողովրդի պատկերացումները, նրա լավագույն երազանքներն ու ակնկալությունները:

Էպոսի կերպարների մեջ ժողովուրդը մարմնավորել է այն մարդկանց ընդհանուր հայացքները, ովքեր պատերազմ չեն ցանկանում, ովքեր չեն ուզում հեղել ո՛չ իրենց, ո՛չ էլ օտարի արյունը, բայց ստիպված են պատերազմել հանուն ազատության և խաղաղության: Այս հայացքները հիմնված են դարավոր փորձի վրա, որ ժողովուրդը ձեռք է բերել պատերազմների, ասպատակությունների, բռնաճնշումների, արյունահեղ կոտորածների, սեփական թագավորների լծի ներքո կրած տառապանքների բովում: Էպոսում մարմնավորված են աշխատավոր ժողովրդի բարոյական սկզբունքները, հատկապես հայրենասիրությունն ու ժողովուրդների բարեկամությունը:

Էպոսում հայրենասիրությունը համազգային է, քանի որ թշնամին գալիս է ոչ միայն շահագործելու, հարկ տանելու, այլև ոչնչացնելու ժողովրդին, կործանելու երկիրն այնպես, որ «Ալ Սասուն անուն չեղնի երկրի վրա»:

Սասնա վիպական հերոսների անպարտելի հերոսականության հատկանիշը ամենից առաջ պայմանավորված է նրանց նախնիների գերբնական ծննդով. Սանասարն ու Բաղդասարը սերում են ջրից, հետևաբար նրանք սովորական մահկանացու-մարդածիններ չեն, այլ դյուցազուններ.

Թե խալխ տարով կը ջոջանան,

Էնոնք օրով ջոջացան:

Երկվորյակ եղբայրների այդ վիթխարի ֆիզիկական ուժը բնավ ինքնանպատակ չէ. Այն ուղղված է մարդկանց բարիք գործելու կամ չար դիվային ուժերից մարդկանց փրկելու և պաշտպանելու նպատակին: Այս պարագաներում էլ դրսևորվում է վեպի հերոսականությունը իր բոլոր դրական, մարդասիրական հետևանքներով:

Երբ Սանասարն ու Բաղդասարն ազատում են իրենց մորը՝ Ծովինարին, նրանք, ըստ էության, ազատում են հափշտակված մայր հայրենիքը: Ծովինարը բարձր հոգեկան ուժի տեր կնոջ հոյակապ կերպար է, ազգային հերոսուհու փառավոր կերպար, որն իր մեջ խտացնում է ինքնազոհության համար մաքառող, ազատության ձգտող ժողովրդի դարավոր ակնկալությունը: Նա անձնուրաց հայրենասեր է. Ցանկանում է ինքնակամ գնալ Բաղդադ, քան տեսնել հարազատ երկիրն ու ժողովրդին կործանված.

Իս մեկ ջան իմ,էրթամ կուրսվեմ աղեկի,

Քանց իմ խոր էրկիր ավերի:

Ջրից ծնված և ջրից ուժ առած հերոս եղբայրները կատուցում են Սասնա բերդը, մտածում ժողովրդի բարօրության մասին և մտահոգված են իրենց տան անառիկությամբ և գալիք սերնդի հզորությամբ, քանի որ փորձը ցույց է տվել, որ թշնամիների, զավթիչների շրջապատում ազատ, խաղաղ ու անկախ կարող է ապրել այն ազգը, ով հզոր է:Սանասարը կապված է բնության տարրերի հետ, նրան կնքում են թոնրի վրա, որտեղից ստանում է կրակային ոգին, ծովի հատակից հանում է Քուռկիկ Ջալալին և Թուր Կեծակին: Քուռկիկ Ջալալին թռչում է դեպի արևը և խոսում է մարդկային լեզվով, ուժ տալիս Սասնա հերոսներին, օգնում նրանց, նրանց հետ հավասար կռվում: Եղբայրների կառուցած տունը հայոց տունն է, հայի հայրենիքը, որին ժողովուրդը տենչում է տեսնել ազատ ու անկախ: Նրանք ժողովրդից հարկեր չեն վերցնում և մարդկանց չեն շահագործում:

Սասնա տան նախնիների դյուցազնական ահռելի ուժն ու հերոսական հատկանիշները գրեթե նույնությամբ փոխանցվում են նրանց ժառանգներին: Սանասարի որդի Մհերը ուժն ու քաջությունը ժառանգել է հորից, մինչդեռ նրա մյուս եղբայրները՝ Ձենով Հովանն ու Վերգոն, մարդկային թուլություններով օժտված պարզ մահկանացուներ են:Մհերը տասնհինգ տարեկանում սպանում է առյուծին՝

սասունցիներին ազատելով սովից, կռվում Սպիտակ դևի դեմ,փրկում գեղեցկուհի Արմաղանին, ամուսնանում նրա հետ, կառուցում Մարութա վանքը: Մհերը Մսրա Մելիքին հաղթել չի կարողանում, քանի որ Մելիքը խորամանկ է, խարդախ: Նրանք հաշտվում եմ, բայց դա հաղթական է Մհերի համար, քանի որ ժողովուրդն ազատվում է հարկերից և շարունակում է ապրել ազատ ու խաղաղ:

Մհերի հայրենասիրությունը յուրովի է արտահայտվում էպոսում: Յոթ տարի Մըսրում մնալուց հետո իմանում է Իսմիլ Խաթունի՝ հզոր ժառանգ ունենալու մտադրությունը և իշխելու ու նվաճելու տենչը: Օտարին զորեղացնելու, սեփական ժողովրդին ու հայրենիքը վտանգի ենթարկելու գաղափարը անչափ ծանր է Մհերի համար: Սասունը անառիկ պահելու, Սասնա ճրագը վառ պահելու հույսով նա վերադառնում է Սասուն: Մհերի առջև դրված է հայրենիքի այսօրվա և վաղվա հզորությունը: Եթե իր մահը կյանք ու հզորություն է ծնում ընդհանուրի համար, ապա նա պատրաստ է մեռնել հանուն դրա, հանուն հայրենիքի վաղվա օրվա: Նա պատրաստ է անձնազոհության, միայն թե ժառանգ ունենա, ով կշարունակի իր գործն ու կշենացնի Սասունը:

Բալքիմ Աստված մի ճրագ կպուցու,

Մեկ տղա ըլնը՛, մե խայու ճրագ կպնը՛...

Մհերը հաստատ գիտի, որ եթե տղան լույս աշխարհ գա, ինքն ուԱրմաղանը կմեռնեն, բայց դա նրանց չի սարսափեցնում: Սեփական կյանքի կորուստը դեռ ժողովրդի կորուստ չէ. այն կյանք է ծնում՝ ապրելու և հզոր մնալու: Նրանք մեռնում են հանուն նորի, հանուն անմահության, հանուն հայրենիքի ապագայի: Այստեղ Մհերի հայրենասիրությունը սահման չունի: Մհերի կողմից հաղթված մահի մեջ ժողովուրդը մարմնավորել է իր անմահության գաղափարը: Ժողովուրդը սգում է նրա կորուստը՝ յոթ տարի սուգ կապելով: Սա ազգային մեծ սուգ է:

Դավիթը հայ ժողովրդի սիրելի հերոսն է, նրա մեջ համընկնում են բարոյականն ու գեղեցիկը: Այն վայրը, որտեղ ծնվել և մեծացել է մարդը, հայրենասիրության աղբյուր է: Հայրենիքի ամեն մի անկյունը՝ անտառները, գետերը, լեռները, լճերը, հարազատ են յուրաքանչյուր հայրենասեր մարդու: Դավիթը կռվի գնալուց առաջ «մնաս բարով» է ասում հայրենի լեռներին, քամիներին ու աղբյուրներին.

Ծովասարու պաղ-պա՛ղ աղբրներ,

Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք:

Ես կէրթամ կռիվ, կը ծարավնա՛մ,

Դուք ինձնից կարո՛տ մնացեք:

Ծովասարու պաղ-պա՛ղ քամիներ,

Մնացե՛ք բարով, բարի՛ մնացեք,

Ես կէրթամ կռիվ, կը շոգնա՛մ,

Դուք հո՛վ մնացեք:

Հայրենիքի հանդեպ ունեցած Դավթի սերը բխում է դեպի մարդկությունն ունեցած սիրուց: Նա կռվում է ոչ միայն իր ժողովրդի պատիվն ու իրավունքը պաշտպանելու, Սասունը ստրկացնող ձեռքից ազատ պահելու համար, այլև ազատագրում է թշմանու լծի տակ տառապող ժողովրդին:Սա բարձր հայրենասիրություն է, ժողովուրդների բարեկանությունն իր մեջ ներառող համամարդկային զգացմունք: Դավիթը չի ստրկացնում այլ ժողովուրդների, պարտված բանակից հարկ չի վերցնում, այլ ազատ է արձակում, որ գնան և խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով ապրեն: Ժողովուրդը միշտ երազել է միասնության, խաղաղության, հանգստության, հասկացել է, որ միասնականությամբ կարելի է հասնել ամեն դրականի և ապրել է «գյուղ կանգնի, գերան կոտրի» սկզբունքով, մինչդեռ թշմանին շարժվել է «բաժանի՛ր, որ տիրես» սկզբունքով:

«Սասունցի Դավիթ» էպոսի միամիտ, թլոր ու ծուռ հերոսը՝ Դավիթը, խիզախ է, հայրենասեր, ով ատում է թշնամիներին, բայց ստոր միջոցների չի դիմում, չի խորամանկում, չի խաբում: Նա մեծահոգի է և հավատում է հաղթանակին, քանի որ գիտակցում է, որ հայրենիքի փրկության համար է պայքարում: Դավիթը գիշերով ու հանկարծակի չի հարձակվում, այլ հայտնում է իր հարձակվելու մասին՝ ստեղծելով հավասար պայմաններ:

Ո՛վ քնած է՝ արթուն կացեք,

Ո՛վ արթուն է՝ ձիեր թամբեք,

Ո՞վ թամբեր է՝ զենքեր կապեք,

Ո՞վ կապեր է՝ ելե՞ք, հեծե՞ք,

Չասեք Դավիթ գող-գող եկավ,

Գող- գող գնաց:

Նա մենակ է գնում մարտի. դա ժողովրդի կռիվն է բռնակալության դեմ: Սա ազնվության վեհ արարք է: Անգամ արնախում գազանի դեմ չպետք է «գող-գող» հարձակվել, ինչպես արել և անում են մեր դարավոր թշնամիները: Սա նաև բացահայտում է Դավթի առաքինությունը: Դավիթը լսում և հարգում է թշնամու «հալևորին»՝ որպես աշխատավոր ժողովրդի ներկայացուցչի: Նա, սպանելով Մելիքին, ազատություն է տալիս Մսրա ժողովրդին, ովքեր բռնությամբ են բերվել պատերազմի դաշտ:

Ժողովուրդը Դավթի ձեռքերով քանդում է պարիսպը, ազատ արձակում կենդանիներին, ջնջում այն սահմանները, որ զրկում են հողից, ջրից, որս անելու հնարավորությունից:

Սասնա հերոսները հայրենիքին համարժեք սիրում և գնահատում են մորը, խոնարհվում մոր առաջ,անգամ թշնամու մոր առաջ: Էպոսում Արտատեր Պառավը մոր նման բարի է, նա կարող է հայհոյել, անիծել, հարվածել, բայց Դավիթը չի նեղանում նրանից, այլ խոնարհաբար լռում է: Հարգում է նաև թշնամու մոր՝ Իսմիլ Խաթունի խնդրանքին, որ մի զարկը իրեն բաշխի, և կատարում է այդ խնդրանքը:

Սակայն Դավիթն անթերի չէ: Նա ամուսնանում է Խանդութ Խաթունի հետ՝ դրժելով այն խոստումը, որ տվել էր Չմշկիկ Սուլթանին: Նա այստեղ դրսևորում է անպատասխանատվություն, որպես տղամարդ՝ չի կատարում խոստումը: Արդյունքում՝ Չմշկիկ Սուլթանի աղջիկն էլ, վիրավորված մորը հասցրած անարգանքից, թունավոր նետով սպանում է հորը՝ Դավթին: Դավթի կերպարում և հատկապես երրորդ ճյուղում մենք տեսնում ենք մարդուն հատուկ բոլոր հատկանիշները՝ թերություններով հանդերձ:

Փոքր Միհրը տիեզերական կերպար է, ով թափառելով երկրից երկիր,փորձում է գտնել արդարություն և ազատություն: Ի տարբերություն Դավթի՝ Միհրին տանջողը

աշխարհում գոյություն ունեցեղ անարդար կարգերն են, որին նա ուզում է դիմակայել իր հզոր և անկոտրում կամքով: Մհերն ազատագրում է Բաղդադը, փրկում Հալեպը չարիքներից, մարտնչում հարկահանների դեմ, կռվում Կոզբադնի թոռների, Չմշկիկ Սուլթանի և նրա զորքի դեմ՝ լուծելով հոր վրեժը:Նա պատժում է հայրենիքի դավաճան վանականներին և վանքը վերանվանում Մատնավանք: Մհերը դառնում է ավելի տիեզերական կերպար «աշխարհի բախտը դարձնող»: Բայց նրա անսահման մարդասիրությունն անկարող է վերացնել չարն ու անարդարությունը երկրի երեսից, ու նա, ով անիծված էր հորից, փակվում է Ագռավաքարում: Կատարվում է հոր անեծքը. Մհերը մնում է անմահ ու անժառանք: Նա , դուրս է գալիս տարին մեկ՝ պարզելու՝ փոխվե՛լ է աշխարհը: Համոզվելով, որ ամեն ինչ նույնն է, վերադառնում է քարայրը:

Մհերի կերպարում տեսնում ենք ժողովրդի իմաստուն ոգին, նրա պայքարով ու դառնությամբ լի պատմությունը, ապրելու և հավերժ գմնալու հավատը: Նրա կերպարում անմահությունն ու անժառանք լինելը փոխադարձաբար պայմանավորված են: Նա անմահ է, քանի որ մեղք չի գործել:

Խոսել հայրենասեր հերոսներից և չներկայացնել Ձենով Հովանին ու Քեռի Թորոսին, ճիշտ չի լինի; Ձենով Հովանը նահապետն է Սասնա դյուցազնական երկրի և մտահոգված է իր երկրի ճակատագրով: Նրա երազը հայ ժողովրդի երազն է՝ սպասվող վտանգի և հայրենիքի լուսավոր ապագայի մասին: Կյանքի փորձություններում իմաստնացած Հովանը նման է այն արծվին, որ իր ձագերին խնամում է մինչև թևեր առնելն ու ամրանալը, մինչև թռչելը; Նույնն է անում և Քեռի Թորոսը: Նրանք պահում ու պաշտպանում են այն ամենը, ինչը կապված է հայրենիքի հետ:

Իրենց ամուսիններից հայրենասիրությամբ ետ չեն մնում նաև էպոսի կին կերպարները՝ Դեղձուն Ծամը, Արմաղանը, Խանդութ Խաթունը և Գոհարը: Նրանք գեղեցկության ու քնքշության հետ մեկտեղ օժտված են նաև խիզախությամբ, քաջությամբ, հայրենասիրությամբ, անձնազոհությամբ , նվիրվածությամբ ու բարձր բարոյականությամբ: Նրանք լիովին համապատասխան են իրենց սիրեցյալ

դյուցազուններին: Հայ ժողովուրդը չի զանազանել կնոջը տղամարդուց: Նա խանդութի մասին ասել է.«Առյուծն առյուծ է, էղնի էգ, թե որձ»:

Էպոսի հերոսներն իրենց հայրենասիրությամբ հրաշալի դասեր են տալիս նոր սերնդին, ովքեր նրանցից սովորում են վստահություն սեփական ուժերի հանդեպ, համարձակություն, խիզախություն, կամք, հայրենիքի համար պայքարելու հզոր ուժ:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խմբային աշխատանքը կատարում ենք «Սասունցի Դավիթ» էպոսն ամփոփելու ժամանակ: Աշակերտները դիտում են «Սասունցի Դավիթ» մուլտֆիլմը, ապա դասարանը բաժանվում է չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ ներկայացնում է «Սասունցի Դավիթ» էպոսի մեկ ճյուղ՝ հիմնականում կենտրոնանալով հերոսների հայրենասիրական դաստիարակության վրա և համեմատական եզրեր անցկացնելով նաև մեր ազգային հերոսներից որևէ մեկի հետ, և պատասխանում են նախապես տրված հարցերին:

Առաջին խումբ - «Սանասար և Բաղդասար»

Երկրորդ խումբ - «Մեծ Մհեր»

Երրորդ խումբ _ «Սասունցի Դավիթ»

Չորրորդ Խումբ – Փոքր Մհեր»

Նախապես տրված հարցերը՝

1. Ի՞նչ է հայրենասիրությունը:

2. Էպոսում հայրենասիրության արտահայտման ո՞ր հատվածն է դուր եկել, ինչու՞:

3. Ե՞րբ և աշխարհագրական ո՞ր տարածքում է ստեղծվել էպոսը:

4. Ի՞նչ խորհրդանշաններ կան էպոսում :

5. Ի՞նչ դեր ունի ջրի պաշտամունքը էպոսում:

ՔԱՌԱԲԱԺԱՆՈՒՄ

Ի՞նչ ընդհանրություններ տեսար:	Ի՞նչ զգացիր:
Ի՞նչ խորհրդանիշներ առանձնացրիր:	Ի՞նչ սովորեցիր:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդական էպոսը՝ «Սասունցի Դավիթը», պատկերելով հայ ժողովրդի ատելությունն ու դարավոր պայքարը իրեն ճնշող բռնակալների դեմ, եղել է հայ ժողովրդի դաստիարակը: Նա փրկել է ժողովրդին այլ ազգերին ձուլվելուց, դաստիարակել մարդասիրություն, ժողովրդասիրություն, հայրենասիրություն, հույս, հավատ, ազատ երկիր ստեղծելու պատրաստակամություն: Իմ խորին համոզմամբ՝ մարդը մինչ կայանալը երկար ճանապարհ է անցնում. նա հոգով ու արմատներով կապվում է իր երկրի մշակույթին, ազգային կենսակերպին ու կենսաձևին, ստեղծում ժամանակի ընթացքում համամարդկային դարձող արժեքներ, որպեսզի դառնա անհատականություն: Ազգային արժեքները մշակույթի ընդհանուր համակարգում առանձնահատուկ տեղ ունեն, և յուրաքանչյուր ազգ առանձնանում է միայն իրեն հատուկ խառնվածքով, մտածողությամբ, աշխարհընկալմամբ: Արժեքները արմատավորվում են ազգի մեջ հազարամյակների ընթացքում:Այսօր հաստատուն պահպանվում են այնպիսի արժեքներ, ինչպիսիք են ընտանիքի կայունությունը, հարգանքը մեծահասակների նկատմամբ, հյուրընկալությունը, բարեկամական կապերի կայունությունը, օգնության հասնելու պատրաստակամությունը: Աճող սերնդի ազգային-հոգևոր գիտակցության դաստիարակության խնդիրը դառնում է ազգայնացման գործընթացի գերակա ուղղություն և, իհարկե, առանց կտրվելու համամարդկային և ազգային արժեքներից: Կարևոր է ազգային գիտակցության ձևավորումը, պատասխանատվության զգացումը հայրենիքի պատմության, մշակույթի և սեփական ժողովրդի նկատմամբ:

Մենք սովորողին սովորեցնում ենք տարբերել ճշմարիտը կեղծիքից, դրականը բացասականից: Նրանց կողմնորոշում ենք դեպի ազնվության , արդարության ու խաբեության, գեղեցիկի ու տգեղի, բարու ու չարի և այլ որակների գիտակցումը, երբ բարոյական դաստիարակություն ենք իրականացնում: Այս որակների մեջ մենք չպետք է մոռանանք նաև սեր սերմանել հայրենիքի հանդեպ, քանի որ հայրենիքը մեծագույն արժեք է, իսկ հայրենասիրությունը սրբազան զգացմունք: Եթե սիրում ես հայրենիքդ, նշանակում է սիրում ես քեզ պահող և կերակրող հողը, ծարավդ հագեցնող ջուրը, հանգիստդ ապահովող բնությունը:Հայրենիքը սիրողը նախ և առաջ սիրում է ընտանիքը, գերդաստանը, որի համար կյանքի գնով պատրաստ է պահելու և

պաշտպանելու երկիրը: Հայրենասիրությունը սկսվում է ընտանիքից, զարգանում դպրոցում ամրապնդվում ազգային բանակում: Հայրենասիրության վառ օրինակ են Ավարայրի հերոսամարտը, Սարդարապատի ճակատամարտը, Արցախյան պատերազմը..., որ նշանավորվեցին անձնազոհ հերոսներով: «Հայրենիքներն ապրում են հայրենասիրությամբ, կործանվում դրա պակասի պատճառով»,-ասել է Նժդեհը: Դարերի ընթացքում չսովորելով դասեր քաղել պատմությունից՝ մենք քառասունչորսօրյա պատերազմում մղձավանջ ապրեցինք: Բայց պետք է ապրել, պայքարել, բազմանալ և նրանց հիշատակն էլ ապրեցնել; Նրանք զոհվեցին հայրենիքի փրկության համար: Այդպես վարվեցին նաև էպոսի մեր հերոսները՝ Մեծ Մհերն ու կինը՝ Արմաղանը:

Մեծ է էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում: Էպոսի հերոսները, որքան խորն են սիրում իրենց հայրենիքը, այնքան էլ ուժգին են ատում թշնամիներին: Այս գիտակցումով էլ դաստիարակվել են հետագա սերունդները: Այսօրվա խնդիրն է հայեցի դաստիարակությունը. կերտել այնպիսի սերունդ, որ օժտված լինի բարոյական բարձր հատկանիշներով, զինվի հարուստ գիտելիքներով, պայքարի հզոր հայրենիք ունենալուն...Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա՝ որն է իր անելիքն իր հայրենիքում: Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի, որ ամենակարևորը սեփական հայրենիքն իրական սիրով սիրելն է, և սա պետք է դառնա կրթության հենքը և արժեհամակարգի ձևավորումը:

Ուսումնասիրելով էպոսը և բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակությունը, սովորողների մոտ կձևավորվի ազգային դիմագիծ, հայրենասիրություն, պետականամետ մտածելակերպ, արժեհամակարգ, ազգային ինքնության ընկալում, միմյանց օգնելու և աջակցելու ձգտում, հարգանք մեծի հանդեպ... Նրանք կունենան տեսլական՝ ինչպիսին դառնալ, դեպի ուր շարժվել...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

«Սասունցի Դավիթ» էպոսը – Երևան, 1981

Մանուկ Աբեղյան-Երկեր Ը /«Ազգային վեպ»/-Երևան,1985

Գրիգոր Գրիգորյան-«Հայ ժողովրդական բանահյուսություն»- Երևան, 1980

Գրիգոր Գրիգորյան - «Հայ ժողովրդական հերոսական էպոսը»- Երևան, 1960

Սրբուհի Հայրապետյան-«Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն»